

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 8

### ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի 2013թ. ապրիլի 19-ի նիստի

Խորհրդի 32 անդամներից ներկա էին 26-ը: Նախագահում էր խորհրդի նախագահ Գ. Ղազինյանը, քարտուղարում՝ խորհրդի քարտուղար Տ. Դավթյանը: Քվորումը ստուգելուց հետո խորհրդի նախագահը քվեարկության դրեց օրակարգը, որը միաձայն հաստատելուց հետո խորհուրդն անցավ օրակարգի հարցերի քննարկմանը (օրակարգը կցվում է):

#### Օրակարգ.

1. Գիտական կոչման շնորհում:
2. Քաղաքացիական իրավունքի ամբիոնի հաղորդումը ուսումնական և գիտահետազոտական գործունեության կազմակերպման մասին (զեկ.՝ ամբիոնի վարիչ, պրոֆ. Տ. Բարսեղյան):
3. Ավարտական և մագիստրոսական աշխատանքներ պատրաստելու մեթոդական ցուցումները հաստատելու մասին:
4. Ուսումնական-առարկայական ծրագրերի հաստատման մասին:
5. 2012-2013 ուս. տարվա պետական քննությունների, մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների պաշտպանության նախապատրաստման վիճակի մասին (զեկուցողներ՝ ամբիոնների վարիչներ):
6. Ընթացիկ հարցեր:

1. Գիտական կոչման շնորհում:  
ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի միջնորդությունը պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի ասիստենտ, իրավ. գիտ. թեկնածու Հայկ Մարտիրոսյանին դոցենտի գիտական կոչում շնորհելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Իրավագիտության ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի նախագահ Ս.Դիլբանդյանը ծանոթացրեց թեկնածուի անձնական գործի տվյալներին, հայտնեց, որ Հայկ Մարտիրոսյանի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են դոցենտի գիտական կոչում շնորհելու մասին ՀՀ կառավարության կողմից սահմանված պահանջներին, ինչպես նաև ներկայացրեց հավակնորդի թեկնածության վերաբերյալ համապատասխան ամբիոնի միաձայն երաշխավորությունը և ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի դրական եզրակացությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Տ.Բարսեղյանը, Տ. Դավթյանը, Վ. Քոչարյանը, Ս. Առաքելյանը, Ս.Մեղրյանը, Ա.Գաբուգյանը, Գ.Ղազինյանը:

Խորհուրդը որոշեց անցկացնել բաց քվեարկություն, որի արդյունքում միաձայն բավարարվեց մրցութային հանձնաժողովի միջնորդությունը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաստատել քվեարկության արդյունքները և միջնորդել ԵՊՀ գիտական խորհրդին՝ պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի ասիստենտ, իրավ. գիտ. թեկնածու Հայկ Մարտիրոսյանին շնորհել դոցենտի գիտական կոչում:

**2. ԼՍԵՑԻՆ. Քաղաքացիական իրավունքի ամբիոնի հաղորդումը ուսումնական և գիտահետազոտական գործունեության կազմակերպման մասին (զեկ.՝ ամբիոնի վարիչ, պրոֆ. Տ. Բարսեղյան):**

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Ս. Մեղրյանը, Տ. Դավթյանը, Ն. Այվազյանը, Ա. Իսկոյանը, Գ. Ղազինյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Քաղաքացիական իրավունքի ամբիոնի հաշվետվությունն ընդունելի գիտություն, իսկ հաշվետու ժամանակահատվածում ամբիոնում կատարված աշխատանքը գնահատել դրական:

**2. ԼՍԵՑԻՆ. Ավարտական և մագիստրոսական աշխատանքներ պատրաստելու մեթոդական ցուցումները հաստատելու մասին:**

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Մեթոդխորհրդի անդամ, գիտքարտուղար Տ. Դավթյանը ներկայացրեց ավարտական և մագիստրոսական աշխատանքների պատրաստման մեթոդական ցուցումների կառուցվածքը և հիմնական դրույթները, նշեց, որ այն քննարկվել է մեթոդխորհրդի նիստում և միաձայն որոշվել միջնորդել Ֆակուլտետի գիտական խորհրդին հաստատել մեթոդական ցուցումները :

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Ն. Այվազյանը, Ա. Գաբուզյանը, Վ. Քոչարյանը, Ա. Վաղարշյանը, Տ. Բարսեղյանը, Ս. Մեղրյանը, Ռ. Եղյանը, Ս. Դիլբանդյանը, Տ. Դավթյանը, Գ. Ղազինյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Բավարարել մեթոդխորհրդի միջնորդությունը և հաստատել Իրավագիտության ֆակուլտետում ավարտական և մագիստրոսական աշխատանքներ պատրաստելու մեթոդական ցուցումները:

**4. ԼՍԵՑԻՆ. Ուսումնական-առարկայական ծրագրերի հաստատման մասին:**

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Մեթոդխորհրդի նախագահ Ա. Մարգարյանը ներկայացրեց, որ մեթոդխորհրդի կողմից քննարկվել են որոշ ամբիոններից ստացված ուսումնական առարկայական ծրագրերը՝ ֆակուլտետի գիտական խորհրդի կողմից հաստատված նոր չափանիշների համապատասխան: Դրանց վերաբերյալ առկա է մեթոդխորհրդի դրական եզրակացությունը: Ա. Մարգարյանը միջնորդեց գիտական խորհրդին հաստատելու «Քրեական իրավունք 1», «Քրեական իրավունք 4», «Հանցավոր վարքագծի մոտիվացիա», «Կրիմինալոգիա», «Կրիմինալոգիական տեսություններ», «Հանցավորության նկատմամբ վերահսկողությունը», «Քաղաքացիական դատավարություն 2» ծրագրերը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Ն. Այվազյանը, Ա. Գաբուզյանը, Վ. Քոչարյանը, Ա. Վաղարշյանը, Տ. Բարսեղյանը, Ս. Մեղրյանը, Ռ. Եղյանը, Ս. Դիլբանդյանը, Տ. Դավթյանը, Գ. Ղազինյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Հաստատել Քրեական իրավունք 1», «Քրեական իրավունք 4», «Հանցավոր վարքագծի մոտիվացիա», «Կրիմինալոգիա», «Կրիմինալոգիական տեսություններ», «Հանցավորության նկատմամբ վերահսկողությունը», «Քաղաքացիական դատավարություն 2» ուսումնական առարկայական ծրագրերը:

**5. ԼՍԵՑԻՆ. 2012-2013 ուս. տարվա պետական քննությունների, մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների պաշտպանության նախապատրաստման վիճակի մասին (զեկուցողներ՝ ամբիոնների վարիչներ) :**

Ամբիոնների վարիչները ներկայացրեցին մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների պատրաստման վիճակը: Ընդհանուր առմամբ դրական գնահատվեց կատարված աշխատանքները և դրանց ընթացքը: Բոլոր

աշխատանքները հանձնված են գրախոսման, մեծ մասն արդեն գրախոսված է, մնացածն էլ առաջիկա օրերին պատրաստ կլինի: Վտանգավոր վիճակում է գտնվում մեկ աշխատանք եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնում: Պատրաստ են նաև պետական քննությունների քննատոմսերը, հարցաշարերը, նշանակված են քննությունների և խորհրդատվության օրերը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Ս. Մեղրյանը, Տ. Դավթյանը, Ն. Այվազյանը, Ա. Իսկոյանը, Գ. Ղազինյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** 2012-2013 ուս. տարվա մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների նախապատրաստման վիճակի մասին ամբիոնների վարիչների հաղորդումներն ընդունելի գիտություն:

6.1. **ԼՍԵՑԻՆ.** Քաղաքացիական իրավունքի ամբիոնի միջնորդությունը Հայ-Ռուսական /Սլավոնական/ համալսարանի հայցորդ Կարինե Պողոսյանի թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման և գիտական ղեկավար նշանակելու մասին :

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Տ. Բարսեղյանը, Տ. Դավթյանը, Ս. Մեղրյանը, Գ. Ղազինյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

ա/ հաստատել Կարինե Պողոսյանի «Հեղինակային իրավունքների իրականացումըն ու պաշտպանությունը համացանցում» վերտառությամբ ատենախոսության թեման, մասնագիտությունը՝ իրավագիտություն, շիֆրը ԺԲ 00.03-Քաղաքացիական իրավունք, առևտրային (կոմերցիոն) իրավունք, միջազգային մասնավոր իրավունք, ընտանեկան իրավունք, աշխատանքային իրավունք, սոցիալական ապահովության իրավունք,

բ/ Կարինե Պողոսյանի գիտական ղեկավար նշանակել Ա. Թունյանին :

6.2. **ԼՍԵՑԻՆ.** Պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի միջնորդությունը ամբիոնի ասպիրանտ Մարիամ Մնդոյանի թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման և գիտական ղեկավարի նշանակման մասին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Ա. Վաղարշյանը, Տ. Սիմոնյանը, Տ. Դավթյանը, Գ. Ղազինյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

ա/ հաստատել Մարիամ Մնդոյանի «Իրավաստեղծագործության վրա գործոնների համակարգային հավասարակշռության հիմնախնդիրները» վերտառությամբ ատենախոսության թեման, մասնագիտությունը՝ իրավագիտություն, շիֆրը ԺԲ 00.01 «Պետության և իրավունքի տեսություն ու պատմություն, իրավական ուսմունքներ»,

բ/ Մարիամ Մնդոյանի գիտական ղեկավար նշանակել դոցենտ Ա. Վաղարշյանին :

գ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատել իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

6.3. **ԼՍԵՑԻՆ.** Քրեական իրավունքի ամբիոնի միջնորդությունը դոկտորական ատենախոսության թեմայի հաստատման մասին :

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Ա. Գաբուզյանը, Ա. Մարգարյանը, Տ. Դավթյանը, Գ. Ղազինյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

ա/ հաստատել Աննա Մարգարյանի «Անչափահասների հանցավորության կրիմինալոգիական հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ դոկտորական ատենախոսության թեման, մասնագիտությունը՝ իրավագիտություն, շիֆրը ԺԲ 00.05 «Քրեական իրավունք և կիրմինալոգիա., քրեակատարողական իրավունք»,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատել իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

**6.4. ԼՍԵՑԻՆ. Քրեական իրավունքի ամբիոնի միջնորդությունը դոկտորական ատենախոսության թեմայի հաստատման մասին :**

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Ա. Գաբուզյանը, Ա. Մարգարյանը, Տ. Դավթյանը, Գ. Ղազինյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

ա/ հաստատել Տիգրան Սիմոնյանի «Երիտասարդների հանցավորության դեմ պայքարի կրիմինալոգիական հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ դոկտորական ատենախոսության թեման, մասնագիտությունը՝ իրավագիտություն, շիֆրը ԺԲ 00.05 «Քրեական իրավունք և կրիմինալոգիա., քրեակատարողական իրավունք»,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատել իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

**Խորհրդի նախագահ**

**Գ. Ղազինյան**

**Խորհրդի քարտուղար**

**Տ. Դավթյան**